**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**«ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ**

---

**«31» մայիս 2024թ.**

**ՀՀ, ք. Երևան, Աճառյան 2-րդ նրբ. 2-րդ շենք**
**Հեռ. (+37412) 27-27-27**

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-5 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ

ՄԱՍՆԱԿԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«ԱԳԱՍՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ՏԻԿԻՆ Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Մուրադյան,

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Ագաստ» ՍՊԸ-ի միջև 2024թ. փետրվարի 5-ին կնքված «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-5» ծածկագրով պայմանագրի շրջանակներում սույն թվականի փետրվարի 6-ին ուղարկվել է պատվերի հայտ 25-րդ չափաբաժնի մասով, որը մատակարարվել է փետրվարի 12-ին 6000 հատ քանակությամբ: Միաժամանակ հայտնում եմ, որ 10-րդ և 23-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման համար երկրորդ պատվերի հայտն ուղարկվել է սույն թվականի մարտի 27-ին: Կնքված պայմանագրի շրջանակներում 2-րդ պատվերի մատակարարումը պետք է իրականացվեր 3 աշխատանքային օրվա ընթացքում, որը մինչ այսօր չի իրականացվել, խախտելով «ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-5» ծածկագրով պայմանագրի 2.1.1 և 2.1.7.1 (բ) ենթակետը, այն է՝ գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի. վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հարկ եմ համարում ընդգծել, որ 2-րդ պատվերի հայտն ուղարկելուց հետո Կենտրոնի համապատասխան աշխատակիցների կողմից բանավոր կերպով

իրականացված հեռախոսազանգերին «Ագաստ» ՍՊԸ-ի կողմից պատասխան չի ստացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

«ԿԲԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-5» ծածկագրով պայմանագիր լուծվում է մասնակի 10-րդ և 23-րդ չափաբաժինների մասով:

Հաշվի առնելով վերոգրյալ առաջարկում ենք 5 բանկային օրվա ընթացքում «Այ Դի բանկ» ՓԲԸ-ի **11813017106900-ի** վրա փոխանցել որակավորման ապահովման՝ **12 150 ՀՀ դրամը** և պայմանագրի ապահովման **8 100 ՀՀ դրամ գումարները**, ընդամենը՝ **20 250 ՀՀ դրամ** և վճարման կտրոնները ներկայացնել ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի գնումների համակարգողին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՏՆՕՐԵՆ՝ Digitally signed by NAZINYAN SUREN 3103820607
Date: 2024.05.31 11:13:18 AMT

Ս. ՆԱԶԻՆՅԱՆ